

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը

Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային տոնի առթիվ

Սիրելի կանայք,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Մարտի 8-ի՝ կանանց միջազգային տոնի կապակցությամբ: Գարնանային այս գեղեցիկ տոնն առիթ է մեր հիացմունքն ու խոնարհումը մեկ անգամ ևս հայտնելու ձեզ:

Ձեր անսպառ բարությունը, նվիրվածությունն ու հոգատարությունը անգնահատելի են և արժանի մեծարումի ու հարգանքի:

Հայ կինը բոլոր ժամանակներում էլ եղել է ընտանիքի հենասյունն ու ազգային լավագույն ավանդույթները կրողն ու փոխանցողը: Մեր պատմության մեջ մեծ է ձեր մասնակցությունն այնպիսի ճակատագրական իրադարձությունների, որոնք ուսանելի օրինակներ են դարձել գալիք սերունդների համար: Օրհասական պահերին դուք միշտ եղել եք հայրենիքի համար վճռորոշ իրադարձությունների կենտրոնում և այսօր էլ կերտում եք մեր երկրի ապագան:

Մեր օրերում էլ դուք անմասն չեք երկրի առջև ծառայած խնդիրների լուծման առաքելությունից և ձեր անգնահատելի դերակատարումն ունեք ոչ միայն կանանց իրավունքների պաշտպանության հարցերում, այլև պետական կառավարման, հասարակական-քաղաքական կյանքի ամենատարբեր ոլորտներում:

Թող ձեզանից յուրաքանչյուրը կյանքում վայելի մայրական բերկրանքի հաճելի պահերը, արժանանա աստվածային մեծարանքի ու մեծ սիրո:

Բնության զարթոնքի այս չքնաղ տոնի առիթով ցանկանում եմ միշտ շրջապատված լինեք ջերմությամբ, և թող ձեր ընտանիքներում ու սրտերում իշխեն սերն ու համերաշխությունը:

Եղե՛ք առողջ ու հմայիչ, արարող ու ոգեշնչող:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Ս. Խաչատրյան

07 մարտի 2013 թ.